ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ.

Ս. ԱԹՈՌՈՑՍ

Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհ. Ժողովոյ յառաջիկայ շրջանի առաջին բացումն եղաւ Մայիս 3-ին ընդ նախագահութեամբ Աժն. Ս. Պատրիարքի Հօր։ Առեանը բացուեցաւ Ն. Սրբազնութեան առենաբանութեամբ. յորում՝ անցեալ շրջանի մէջ Տն. Խորհրդոյ կատարած Վարչական և առանձին գործոց հակիրճ նկարագիրն ըրաւ. նոյնպէս արտաքին եւ ներքին յարաբերութեանց համառօտ պատկերը եւ Ս. Աթոռոյս ելից և մտից վիճակը ներկայացոյց, յետ այնորիկ հրապարակական շնորհակալութիւն յայտնեց Մայր—Աթոռոյ Գահակալ Վեհափառ Կաթողիկոսին, Պօլսոյ Աժն. Ս. Պատրիարքին և Աղգ. Կենդրոնական բարեխնամ Վարչութեան, որք զգալով Ս. Աթոռոյս նեղ և անցուկ վիճակը՝ ի հարկին իրենց ջանքը և քաջալերութիւնը երբէք չեն խնայած։ Ապա տագնապալիր ժամանակի պարագայները բացատրելով՝ Ընդհ. Ժողովոյ խորին ուշադրութիւնը հրաւիրեց Դիւանին մէջ եղած խնդրոց վերայ, որք էին Տն. Խորհրդոյ տարեկան համարատուութիւն, ընտրութիւն նոր Տն. Խորհրդոյ, օրինական ծրագրի մի քննութիւն եւ հաստատութիւն եւ 1877—1878 ամի Ս. Աթոռոյս պիւճէի քննութիւն։ Հուսկ ապա կ'ելեց խօսքը ընդհանուր պաշտօնէից շնորհակալութիւն յայտնելով և Աստուծոյ նախախնամական օգնութիւնը խնդրելով։

ԱՏԱՆԱՅԻՆ

Ապրիլ 24 ամսաթուով հետեւեալը կը գրեն. «Արդէն Հաճնոյ ազգայնոյ մի տարապարտ մահը գրած էի. այս անգամ եւս մարդասպանին ստացած դէպ պատիժը գրեմ։ Մէկը չը մեռնի, մեռնելէն յետոյ այլ ևս չը վերադառնար. Կառավարութիւնը զմարդասպանը միայն առ ժամանակ մի բանտարկելով բաւականացաւ. այժմ արձակուած է... եթէ այս ըլլայ մարդասպաններու պատիժը, աշխարհ ոճրագործնելու որչ կ'ըլլայ։

Այս օրերս տեղւոյս Հայք կամաւոր գրուելու համար դրօշակ բացին, և առաջին անգամ դրօշը մեր Եկեղեցւոյ բակը ծածանեցաւ. Հարիւրապետը Բալուցի Նիկողոս անուն կորովի Հայ մ՝է, որոյ հրամանատարութեան տակ շատերը գրուեցան և կը գրուին տակաւին։ Սոյն Հայագունտը ասկէ 3—4 օր առաջ հանդերձ դպրոցական աշակերտներով եւ վարժապետներով Կառավարութեան պալատը գնաց, ուրանօր մի փառաւոր հանդէս տեղի ունեցաւ. Կուսակալն եւ բոլոր պաշտօնակալք ներկայ էին, Հայ կամաւորաց դրօշը պալատ մտած պահուն՝ ի պատիւ ազգիս զինուորական մաղթան դիմաւորեց։ Հանդեսէն վերջը դարձեալ մուղիքայով և տաճկական կամաւորաց գունտերու ընկերակցութեամբ Հայ—գունտը քաղաքին մէջ մեծ պտոյտ մի ընելով՝ իրեն սահմանեալ տեղը գնաց. հուսկ ապա հանդէսը վերջացաւ։ Այս մասին ամեն տաճիկ անհատի ուրախութիւնն ու շնորհակալութիւնը բացատրել անկարելի է։

Կիլիկիոյ խորեր ի՞նչ անոյք կանցնին այս պահուն չեմք գիտեր. տեղեկու-

digitised by A.R.A.R.@

թիւններ առնելու եւ ճշդիւ գրելու համար պէտք է մէկը, որ անձնուիրաբար ջջագայի եւ ամեն ազէտներն թէ բարոյական եւ թէ նիւթական, աչքով տեսնէ եւ ձեռքով ջջարիէ. այժմ այս չափը միայն կարելի է ասել, քանի որ Ատանայի նման վաճառականութեամբ բաւականաչափ բարգաւաճեալ քաղաք մի այսքան կը տառապակրի, քանիօն առաւել ուրիշ տարին տեղեր։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Անցեալ ամսոյ մէջ քաղաքիս Ասորւոց Գեր. Ապտ-իւլ-Նուր Եպիսկոպոսը վախճանեցաւ 'ի հասակի գրեթէ քսանուն ամաց։ Ցիշեալը 30 տարիէ 'ի վեր է որ այստեղ Եպիսկոպոսական պաշտօնը կը վարէր. Հընդկաստանի իրենց աղգայինները այցելութեամբ մխիթարած է եւ անոնց նուիրատու ութեամբ վանքին մէջ շատ նորոգութիւններ ըրեր ու բաւական կալուածներ աւելցուցած է։ Ս. Աթոռոյս կողմէն հարկ եղած անձինքը ղրկուեցան նորա յուղարկաւորութեան համար, որ կատարուեցաւ թէ ըստ մեր եւ թէ ըստ իրենց ծիսից։

— Ամսոյս սկիզբները Եւրոպացի ճանապարհորդ մի Բեթղեհէմի ճանապարհին վերայ սեւամորթի մը դիակ տեսնելով՝ տեղական Կառավարութեան լուր կը տայ։ Եղած քննութիւններէն յայտնուեցաւ, որ սպանեալը դաշտնի հարուածով մեռած է. որովհետեւ ձախ ուսին վերայ վերք մի ունի եղեր։ Դիակին գտնուած տեղը արեան հետք տեսնուած չէ. մարմնոյն մէկ կողմը բացուած է եղեր, թերեւս վայրի կենդանիներ պատռեր են. ըսպանուելէ յետոյ, երեսի մարմը հանուած է։ Այս ամեն պարագայներէն հետեւցուցած են որ մէկ շաբաթ առաջ սպաննուած է։ Այս դիակը Զապթիէի դիակ մի ըլլալը ստուգուեցաւ. որովհետեւ սորա անյայտանալէն մի քանի որ յետոյ Զապթիէներու յիսնապետներէն մէկը՝ որոց առանին ըսպասաւորութիւն կ'ընէ եղեր սպաննեալը՝ ոստիկանութեան տեսչին յայտնած է, որ Զապթիէն իւր տունէն բաւական կահ կարասիք գողնալով փախած է. այս պատճառաւ յիշեալ յիսնապետը իբրեւ կասկածաւոր քննութեան ենթարկուեցաւ։

— Ամսոյս 1 'ին Յոպպէ եկաւ Քաղաքիս նորընտիր Կառավարիչ Վ. սեմ. Բաւֆ փաշան. երկրորդ օրը տեղս ժամանեց մեծ հանդիսիւ եւ ընկերակցութեամբ պաշտօնաւոր անձանց, վանքերու կողմէն ղրկուած Եպիսկոպոսաց եւ Թարգմանաց, նոյնպէս Հիւպատոսաց Թարգմաններու եւ պահակներու։ 4 'ին Հրովարտակը կարդացուելով՝ պաշտօնական այցելութիւններն եղան։

— 5 'ին նախորդ Կառավարիչը մեկնեցաւ։

— 12 'ին Յորդանանու ճանապարհին վերայ քաղաքացի Ջորեպան մի կողոպտուեցաւ Պէդէվիներէն։ Ցիշեալ Ջորեպանը չորս գրասդ ցորեն բեռցած քաղաք կը բերէ։ Արապները կը յարձակին, կենդանիները կ'առնեն հանդերձ բեռներով, նոյնպէս Ջորեպանը կը կողոպտեն եւ վերայի հանդերձները կ'առնեն, երբ կը խնդրէ գոնէ լաթերը թողուլ, դէմքին հարուած մի տալով՝ կը մեկնին։

— Յորդանանու կողմի Արապներու կռիւը դրած էինք Մարտի ամսաթերթով. այժմ զինադադար ըրած են հնձոց պատճառաւ։ Թերեւս հունձէն յետոյ վերսին սկսին։

digitised by A.R.A.R.@